

կրակեղծութիւնն, իրեն միայն բեռ ըլլալուն լուրճը կը պտտուն իբր թէ գալ տարի իտալիա այս դաշն պիտի չնորոգէ: Գերմանիոյ կայսրն ամենայն ճիգ կը թափէ այս որոշումը փոխել տուաւ համար: Բաց աստի դեռ չի գիտցուի թէ արդեւք առեւտրական նպատաւաւոր պայմանաւորութիւն մը ձեռք ձգելու համար մէջտեղը նետուած քաղաքագիտական լուր մը չէ՞ այս: — Սալուստի պաշտօնականը չնչին խնդրոյ մը գոհ երթալով տապալեցաւ: անոր յաջորդեց այլեւայլ փորձերէ վերջ ժամադրեցի պաշտօնականը:

Ռուս-ամերիկեան նոր մաքսական պատեղարար մը ծագած է: Միացեալ Նահանգները կը կարծեն թէ ամէնուն կրնան գողտգանալ, քայց այս անգամ իրենց վարպետը գտան: Ամերիկա ուզեց ռուսական ներմուծեալ շաքարին մաքուր բարձրացընել զգալապէս: Ռուսիա սիրով ձեռք կարկառեց այս ճակատին եւ փոխադարձաբար ամերիկեան երկաթեղինաց վրայ 30 առ հարիւր մաքս գաղթեալ: Այս կողմէն Ռուսիան միայն չամառայր կրնայ ելլել, ինչու որ մինչ ռուսական շաքարն հազիւ 30,000 դոլարի չափ կը մտնէ Միացեալ Նահանգները, այս յետինք իբր 30 միլիոնի փաճառք կ'արտադրեն ի Ռուսիայ:

— Ուսանողաց մէջ խմորում մը ժամանակէ մ'ի վեր կը զարգանայ եւ արդէն իսկ անճաշ ցոյցերու թագմութիւն մը պատահած է ամէն համալսարանական քաղաք: Բոգոլդով ուսման նախարարին սպանմանէն ետքը՝ պաշտօնակալ մը փորձ մ'ալ փորձեց (կ'ըսուի առ վրէժխնդրութեան) Պրեզիդենտը ղգի դէմ: որ բարեբախտաբար ապարդիւն անցաւ: Վաննովսկի 78 տեղայն նոր նախարարը երբեմն պարզմի պաշտօնեայ 2 տարեան լիւսգոր իշխանութեամբ մտադիր է կարգ կանոն հաստատել եւ հասարակաց կրթութեան մասին շատ շնորհումներ ընել: Վերջերս ելած Վերջ. Զարին դէմ դատադրութեանց լրերը, բոլորովին անհիմն են առաջոյ ըն:

Ճննական Գորդեան հանգոյցը սկսած է լուծուիլ, թէ եւ ներքուստ եւ արտաքուստ նորանոր դժուարութիւններ կը յարուցուին: Ճննացոց ամէնէն աւելի համակրողներն Միացեալ Նահանգներն են, որ առարձակեցին թէ պետութեանց Ճննաստանէն

պահանջելու դրամական տոռաքանքն 200 միլիոն անգլ. ոսկին չանցնի: Այս առաջարկութեամբ հանդերձ իրենք իրենց բաժինն ապահովցնելու կը ջանան պահանջելով 25 միլիոնի գումար մը, որ չափազանց բարձր է համեմատութեամբ իրենց ցայժմ ցուցած զինուորական գործունէութեան: Հապալ Անգլիա, Գաղղիա, Գերմանիա, Ճաքոն, Ռուսիա ի՞նչ պիտի պահանջեն, որոնց զօրաց բանակներն իւրաքանչիւրն 10,000 բազմօք կ'անցնի: — Պետութեանց մեծ տգիտութիւն պատճառած է Ռուսիոյ Ճննաստանի նետ եղական դաշնադրութիւն մը Մանչեսթրիոյ նկատմամբ, պետութիւնը բողոքնին մատուցին ճնն կառավարութեան եւ Լիւնդոն չանգէն պահանջեցին դաշնադրոյն բնագիրն, որ սակայն չտուաւ: Ռուսիա ալ բնագիրն հրատարակել չէ ուզած առարկելով թէ Մանչեսթրիոյ գրաստանը չէ նպատակը, այլ երկրին քաղաքական բարեկարգութիւնը, եւ անկողջ ժամանակէ մ'ետքը վերստին ճնն կառավարութեան պիտի դարձնէ վարչութիւնը եւն եւն: Թէեւ Ռուսիա կը պնդէ սակայն ցայսօր ճնն կայսրը դաշնագիրը չէ ստորագրած:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՌՍՍԻԱՆԿԱՆ

ՀԵՆՐԻԿԱՆ — Նաիրի-Ուրարտուի պատմութիւնն ըստ ասորեստանեայ եւ պարսիկ սեպագիր արձանագրութեանց, 66:

ԿԵՆՍԵՂԵՐԿԱՆ — Բէսկէն Միջոյնէ բոլոր ճէր Պետրոսեան, 81:

ՊԵՏՄԱԿԱՆ — Ա. Նոյնաբեթուպոլսոյ զննութեանց շինելու խնդիրը կը շարունակուի. — Բ. Նոյնաբեթուպոլսոյ ազգայինք պահանջուած նոր արտադրութիւնը կ'ընդունին. 92:

ԵՐԿԵՆՆՈՍԵՐԿԱՆ — Երկաթի օսական ուսումնասիրութիւններ Գորք Ասիոյ հարաւ-արեւելեան կողմը, 108:

ԼԵՋԻՏԻՄԱՆԿԱՆ — Գաւառական քանոն, 114:

ՄԵՏԵՆՆՈՍԵՐԿԱՆ. — Տիմիթեազեկ Կ. Զարդ Դարպին. — Տարուարեան ծօք. Ե. Տարուարեան կամութիւն

ԳՐԱՆԿԱՆ — Հայերէն մէջ տար բառերուն խնդիր, 123:

ԱՅԼԵՒԵԼԻՔ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ, 125:

ԲԱՂԵԲԵՐԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 126:



ՀՐԱՏԱՐԱԿԵՐԿ ԵՒ ՊԱՏԱՆՈՒՄԱՆՈՒ ԽՄԱՐԱԿՈՐ

Կ. ՌԱՓԱՅԵԼ Վ. ՊԱՐՈՆՆ

ՎԵՆԵՆԵ. ՄԻԹԱՐԵՐԵՆ 89 ՎԵՐՆ